# ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂԻ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

STUDY GUIDE

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐՏԱՇԵՍ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- Ինչի՞ց է կազմված հեռաուսուցման փաթեթը
- Ինչպե՞ս օգտվել այս ուղեցույցից
- Ի՞նչ է հեռաուսուցումը
- Ի՞նչ առանձնահատկություններ ունի հեռաուսուցման տեքստը
- Ինչպե՞ս օգտվել բառարանից
- Ի՞նչ և ինչի՞ համար են ինքնաստուգիչ հարցերը
- Ինչպե՞ս է գնահատվում առաջադրանքի կատարումը
- Ի՞նչ աջակցություն է ստանում ուսուցանվողը հեռաուսուցման ժամանակ և ինչպե՞ս

# 1. ԻՆՉԻ՞Ց Է ԿԱԶՄՎԱԾ ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՓԱԹԵԹԸ

Հեռաուսուցման փաթեթը պարունակում է՝

- ✓ **ուսուցանվողի հեռաուսուցման ուղեցույց**
- ✓ **ուսումնական ձեռնարկ/մոդուլ (reader)**
- ✓ **առարկայի տերմինների բառարան**
- ✓ **ինքնաստուգիչ հարցերի պատասխանների գրքույկ**
- ✓ **մոտիվացնող ներածական տեսանյութեր, տեսանյութ-օրինակներ**
- ✓ **անհրաժեշտ և լրացուցիչ մեդիա-նյութեր** (տեղեկատվություն փոխանցող բոլոր միջոցներից՝ գրքեր, հոդվածներ, ֆիլմեր, տեսանյութեր և այլն)
- ✓ **ուսումնական ծրագիր**
- ✓ **ուսումնական պլան**
- ✓ **հետադարձ գնահատման թերթիկ**
- ✓ **ուսումնական կարիքների գնահատման թերթիկ**

Այժմ Ձեր ձեռքին է ուղեցույցը: Այն հնարավորություն կտա հասկանալու հեռաուսուցման ողջ ընթացքը: Ուղեցույցին ծանոթանալուց հետո նոր միայն արդյունավետ կլինի ձեռնարկի ընթերցումն ու առաջադրանքների կատարումը:

## 2. ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՑ

Այս գրքույկը նրանց համար է, ովքեր վերապատրաստվելու կամ սովորելու են հեռաուսուցմամբ: Այն կոչված է լինելու հեռաուսուցման «սեղանի գիրք»: Այստեղ կարող եք գտնել ձեռնարկի հասկացման և առաջադրանքների արդյունավետ կատարման համար անհրաժեշտ ցուցումներ: Այս ուղեցույցը տեսանելի է դարձնում հեռաուսուցման փաթեթի կառուցվածքը: Ուղեցույցը Ձեզ հնարավորություն կտա հասկանալու հեռաուսուցման և այլ տեսակի տեքստերի տարբերությունները: